Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի
N 326-Ն որոշման
Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**
2.Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ **ՀՀ վարչապետի N 15-Ա որոշում առ 13.01.2026թ.**
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝
Գևորգ Պապոյան - ՀՀ էկոնոմիկայի նախարար
(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)
4. Գործուղման ժամկետները՝ **2026 թվականի հունվարի 16-18**-ը
5. Գործուղման վայրը՝ **Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Բեռլին)**
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

[■] **ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը**

[ ] բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Գևորգ Պապոյան	Ընդամենը (դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	**339,809**	**339,809**
Գիշերավարձ	Վճարը 1 գիշերվա համար (Բեռլին- EUR)		
	Վճարը 1 գիշերվա համար (դրամ)		
	Գիշերների քանակը		
	Ընդամենը (դրամ)	**-**	**-**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (Բեռլին - EUR)	129	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	57,312	
	Օրերի քանակը (16, 17 - հունվար -2026թ.)	2	
	Ընդամենը (դրամ)	**114,624**	**114,624**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային		
	Նմուշառումների վճար	-	
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր /ՊՊՍ սրահ/	**10,000**	**10,000**
Ընդամենը ծախսեր (դրամ)		**464,433**	**464,433**
Նախահաշվարկով վճարված (դրամ)		**114,624**	**114,624**
Ընդամենը վճարման ենթակա, որից		**349,809**	**349,809**
Ավիատոմսի գումար (դրամ)		**339,809**	**339,809**
ՊՊՍ սրահի գումար (դրամ)		**10,000**	**10,000**

***13.01.2026թ.** ՀՀ ԿԲ արտարժույթի միջին փոխարժեք՝ 1 EUR 444.28

Գլխավոր քարտուղար
/Գլխավոր ֆինանսիստ/՝ ՀԱՅԿԱՋ ՆԱՍԻԲՅԱՆ

Գլխավոր հաշվապահ *Մոնիկա Ղարսյան*

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026թ. հունվարի 16-ից 18-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**
   Գևորգ Պապոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ էկոնոմիկայի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ ք. Բեռլին, 2026թ. հունվարի 16-ից 18-ը

4. **Հրավիրող կողմը՝**
   Գերմանիայի Դաշնային Հանրապետության գյուղատնտեսության, պարենի և հայրենիքի դաշնային նախարարություն

5. **Գործուղման նպատակը՝**
   Մասնակցություն Պարենի և գյուղատնտեսության միջազգային 18-րդ համաժողովին (GFFA)

6. **Քննարկված թեմաները՝**

Այցի ընթացքում կողմերը քննարկել են ջրի կայուն և արդյունավետ օգտագործմանն ուղղված պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, ոլորտի ռազմավարական կառավարման առաջնահերթությունները, համապարփակ ռազմավարության մշակման ընթացքը, կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ռիսկերը, ագրոպարենային արտադրության և պարենային անվտանգության վրա դրանց ազդեցությունը, ինչպես նաև ջրի, գյուղատնտեսության և կենսաբազմազանության փոխկապակցվածությունը կայուն զարգացման համատեքստում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

2026 թվականի հունվարի 16-18-ը ՀՀ էկոնոմիկայի նախարարության պատվիրակությունը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բեռլին

համաժողովին՝ Global Forum for Food and Agriculture (GFFA): Համաժողովը հանդիսանում է բարձր մակարդակի միջազգային հարթակ՝ ուղղված պարենային անվտանգության, գյուղատնտեսության կայուն զարգացման, բնական ռեսուրսների արդյունավետ կառավարման և գլոբալ մարտահրավերներին համատեղ արձագանքելու հարցերի քննարկմանը՝ պետական կառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների և ոլորտային գործընկերների մասնակցությամբ: Միջոցառումը հնարավորություն է ընձեռել ներկայացնելու Հայաստանի Հանրապետության մոտեցումները և առաջնահերթությունները, ինչպես նաև ընդգծելու միջազգային համագործակցության կարևորությունը՝ հատկապես կլիմայի փոփոխության, ջրի սակավության, արտադրողականության բարձրացման և գյուղատնտեսական համակարգերի դիմակայունության ամրապնդման համատեքստում:

Համաժողովի շրջանակներում 2026թ. հունվարի 17-ին կայացել է Բեռլինի գյուղատնտեսության նախարարների համաժողովը (Berlin Agriculture Ministers' Conference), որը հանդիսանում է GFFA-ի քաղաքական օրակարգի գլխավոր միջոցառումը և համախմբել է տարբեր երկրների քաղաքական պատասխանատուներին՝ համատեղ մոտեցումներ ձևավորելու նպատակով: Նախարարական քննարկումներին մասնակցել է ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը, իսկ պատվիրակության կազմում աշխատանքներին մասնակցել է նաև նախարարի տեղակալ Արման Խոջոյանը:

Նախարարական քննարկումներին մասնակցել են ավելի քան 60 երկրի գյուղատնտեսության նախարարներ, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների 14 բարձրաստիճան ներկայացուցիչներ: Քննարկումների ընթացքում արձանագրվել է, որ ջրային ռեսուրսների սակավությունը, դրանց հասանելիության անհավասարությունը և կլիմայական փոփոխություններով պայմանավորված ռիսկերն ազդեցություն են ունենում ինչպես գյուղատնտեսական արտադրության ծավալների, այնպես էլ պարենային անվտանգության կայունության վրա՝ պահանջելով համակարգային քաղաքականություն, տեխնոլոգիական նորարարությունների կիրառում և միջպետական ու միջոլորտային համագործակցության խորացում: Հանդիպումների արդյունքում ընդունվել է համատեղ քաղաքական հայտարարություն՝ «Ջուր. Բերք. Մեր ապագան» խորագրի ներքո, որը շեշտադրել է գյուղատնտեսության և պարենային անվտանգության համար բավարար ջրի ապահովման, ջրային ռեսուրսների կայուն կառավարման, ինչպես նաև միջազգային համագործակցության ու փորձի փոխանակման կարևորությունը: Այդ համատեքստում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ջրի արդյունավետության բարձրացմանը, կայուն կառավարման մոդելների ներդրմանը և ռեսուրսների պահպանմանը՝ որպես երկարաժամկետ զարգացման հիմք:

Ջրի կայուն և արդյունավետ օգտագործմանը նվիրված նիստի ընթացքում նախարար Գևորգ Պապոյանը հանդես է եկել ելույթով՝ ընդգծելով ջրի արդյունավետ կառավարման ռազմավարական նշանակությունը Հայաստանի Հանրապետության կառավարության համար: Նա ներկայացրել է այդ ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականության հիմնական առաջնահերթությունները՝ ուղղված ջրի մատչելիության, կիրառության արդյունավետության և կառավարման համակարգերի կատարելագործմանը, ինչպես նաև գյուղատնտեսական զարգացման ծրագրերի իրականացմանը՝ հաշվի առնելով կլիմայական ռիսկերը և բնական ռեսուրսների սահմանափակումները: Նախարարը նշել է, որ ջրային ռեսուրսների կառավարման հարցում կարևոր է համալիր մոտեցումը՝ ներառյալ ոլորտային քաղաքականությունների համադրումը, կառավարման հստակ գործիքակազմը, տվյալահեն պլանավորումը և պետական ու մասնավոր հատվածների ներգրավվածությունը:

Ելույթում նա անդրադարձել է ներկայումս մշակվող Ջրային ոլորտի համապարփակ ռազմավարական փաստաթղթին, որը կոչված է հստակ արձանագրելու առկա մարտահրավերները և սահմանելու առաջնահերթ միջոցառումները՝ ջրային ռեսուրսների կայուն օգտագործման, կառավարման արդյունավետության բարձրացման և ոլորտում երկարաժամկետ ծրագրավորման ապահովման նպատակով: Նախարարը կարևորել է նաև համատեղ գործողությունների և գործընկերային մոտեցումների անհրաժեշտությունը՝ ջրի հասանելիության և ագրոպարենային արտադրության ոլորտում առկա խնդիրների հաղթահարման համար՝ հատկապես կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ռիսկերին դիմակայելու համատեքստում: Ընդգծվել է, որ խնդրի լուծման համար կարևոր են ոչ միայն ազգային քաղաքականությունները, այլ նաև միջազգային գործակցությունը, լավագույն փորձի փոխանակումը և համատեղ նախաձեռնությունների խթանումը:

Միաժամանակ նախարար Գևորգ Պապոյանը համաժողովի ընթացքում հանդես է եկել առանձին ելույթով, որի շրջանակում կարևորել է ջրի արդյունավետ օգտագործման և ինտենսիվ գյուղատնտեսության անցման անհրաժեշտությունը՝ ընդգծելով ջրի սակավության աճող ազդեցությունը գյուղատնտեսության արտադրողականության և պարենային անվտանգության ապահովման վրա: Նա արձանագրել է, որ արդյունավետ ջրօգտագործումն ու ժամանակակից մոտեցումների կիրառումը կարող են նպաստել արտադրողականության բարձրացմանը, ռեսուրսների խնայող օգտագործմանը և գյուղատնտեսական համակարգերի դիմակայունության ամրապնդմանը: Այդ համատեքստում շեշտադրվել է նաև կանխարգելիչ քաղաքականությունների կարևորությունը՝ ուղղված ռիսկերի կառավարմանը, արտադրության կայունությանը և պարենային շուկաների կանխատեսելիությանը:

Անդրադառնալով 2026 թվականին Հայաստանում կայանալիք «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի Կողմերի 17-րդ համաժողովին (COP17)՝ նախարար Պապոյանը նշել է, որ համաժողովի օրակարգում առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու ջրի, գյուղատնտեսության և կենսաբազմազանության փոխկապակցվածությանը՝ որպես կայուն զարգացման հիմնարար ուղղություն: Այս համատեքստում ընդգծվել է, որ բնական ռեսուրսների պահպանությունն ու արդյունավետ կառավարումը միաժամանակ վերաբերում են ինչպես բնապահպանական, այնպես էլ տնտեսական և սոցիալական կայունությանը՝ հատկապես պարենային համակարգերի և գյուղատնտեսական արտադրության երկարաժամկետ նպատակների համար:

Նախարարը գործընկերներին հրավիրել է Հայաստան՝ ծանոթանալու երկրի ներուժին, ոլորտային առաջնահերթություններին և ընթացիկ նախաձեռնություններին, ինչպես նաև մասնակցելու COP17 միջազգային կարևոր նշանակություն ունեցող միջոցառմանը: Նշվել է, որ նման միջոցառումները նպաստում են միջազգային երկխոսության խորացմանը, համատեղ մոտեցումների ձևավորմանը և համագործակցության նոր հնարավորությունների բացահայտմանը, այդ թվում՝ փորձի փոխանակման, մասնագիտական կապերի ամրապնդման և գործնական նախաձեռնությունների մշակման ուղղություններով:

8. Ստորագրությունը, ամսաթիվը՝
20.01.2026թ.